

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
Սահմանադրական իրավունքի ամբիոն

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց`1905/B07«Մարդու իրավունքների հիմունքներ»

Որակավորման
աստիճան`

բակալավրի կոթական ծրագիր

Կազմեց`

իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
Վ. Այվազյանը

ԵՊՀ հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 2013

ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1905/B07. Մարդու իրավունքների հիմունքներ (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար, 28 ժամ ինքնուրույն աշխատանք)

4-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Դասընթացն ունի համապարփակ բնույթ և սերտորեն կապված է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում դասավանդվող բոլոր դասընթացների հետ: Այն առավելապես ներպետական (սահմանադրական) և միջազգային իրավունքի շրջանակներում հնարավորություն է ընձեռում առավել հիմնարար մակարդակով պատկերացում կազմել մարդու իրավունքների և ազատությունների ինչպես էության ու բովանդակության, այնպես էլ դրանց պաշտպանության ներպետական և միջազգային-իրավական կառուցակարգերի մասին:

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնարար մակարդակով ծանոթացնել մարդու բնական իրավունքների հայեցակարգին, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության միջազգային-իրավական, տարածաշրջանային համակարգերի և ներպետական միջոցների վերաբերյալ գիտելիքների ձևավորմանը:

Կրթական վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

1. պատկերացում կկազմի մարդու բնական իրավունքների հայեցակարգի, անձի իրավական կարգավիճակի ձևավորման հիմնարար սկզբունքների, քաղաքացիության և երկքաղաքացիության ներպետական և միջազգային-իրավական ասպեկտների մասին:

2. Կտիրապետի մարդու իրավունքների պաշտպանության ներպետական միջոցներին:

3. Համապարփակ գիտելիքներ ձեռք կբերի Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում գործունեություն ծավալելու համար:

4. Գիտելիքներ ձեռք կբերի մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միջազգային համապարփակ և տարածաշրջանային կազմակերպություններում աշխատանքի անցնելու համար:

5. Գիտելիքներ ձեռք կբերի մարդու իրավունքների եվրոպական դատարան հայցադիմում գրելու և ներկայացնելու վերաբերյալ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Այն ներառում է 1-7 թեմաները ներառյալ: Բանավոր հարցում: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը առավելագույնը 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Այն ներառում է 8-15 թեմաները: Բանավոր հարցում: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը առավելագույնը 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԹԵՄԱ 1 «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ» ԴԱՍԸՆԹԱՑԸ

(1 ժամ դասախոսություն)

1. «Մարդու իրավունքների հիմունքներ» դասընթացի առարկան, հասկացությունը, դրա կապը իրավունքի մյուս ճյուղերի հետ:
2. «Մարդու իրավունքների հիմունքները» որպես գիտություն:
3. «Մարդու իրավունքների հիմունքներ» դասընթացի աղբյուրները:
4. Դասընթացի մեթոդաբանությունը: Մարդու իրավունքների դերը քաղաքական, տնտեսական, սոցիալական համակարգերի զարգացման գործում:

Հարցեր 1-4 դասախոսություն (ներածական դասախոսության միջոցով ներկայացվում է դասընթացի ընդհանուր բովանդակությունը, անցկացման մեթոդաբանությունը և կրթական վերջնարդյունքները):

Հարցեր 3-4 ինքնուրույն աշխատանք, ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը: (Այվազյան Վ.Ն., Մարդու իրավունքներ, Ուսումնական ձեռնարկ, «Տիգրան մեծ», Երևան, 2007 թ., Права человека, учебник для вузов, ред. Е. А. Лукашева., М., 2006.)

ԹԵՄԱ 2 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

(4 ժամ դասախոսություն)

1. Մարդու իրավունքների հասկացությունը: Իրավունքի և ազատության հարաբերակցությունը:
2. Մարդու իրավունքների հիմնարար բնույթը:

3. Մարդու իրավունքների ծագման պատճառները (տնտեսական և քաղաքական):
Մարդու իրավունքների ճանաչումն ու ամրագրումը պետությունների և միջազգային հանրության կողմից:
4. Մարդու իրավունքների երեք սերունդները.
 - ա) անձնական և քաղաքական իրավունքների սերունդ
 - բ) սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների սերունդ
 - գ) կոլեկտիվ իրավունքների սերունդ:
 Մարդու իրավունքների ամրագրումը իրավա-քաղաքական մտքի պատմության մեջ (Հին Հունաստան, Հին Հռոմ, Մարդու իրավունքների արտացոլումը աստվածաշնչում, Միջին դարեր, Նոր ժամանակներ, Մարդու իրավունքների վերաբերյալ ժամանակակից պատկերացումները):

հարցեր 1-4 դասախոսություն (Դասախոսությունն իրականացվում է դիդակտիկ նյութերը մատուցելու, դրանք վերլուծելու և ուսանողների հետ քննարկելու միջոցով):

հարցեր 1-4 ինքնուրույն աշխատանք, ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը (Այվազյան Վ.Ն., Մարդու իրավունքներ, Ուսումնական ձեռնարկ, «Տիգրան մեծ», Երևան, 2007 թ., Права человека, учебник для вузов ред. Е. А. Лукашева, М., 2006, История политических и правовых учений, под ред. В.С. Нерсисянца, М., 1995.):

ԹԵՄԱ 3 ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

(2 ժամ դասախոսություն)

1. Անձի իրավական կարգավիճակի հասկացությունը և դրա վրա ազդող հանգամանքները (քաղաքացիությունը, հիմնական իրավունքներն, ազատություններն ու պարտականությունները, գործունակությունը, սոցիալական առանձնահատկությունը):
2. Մարդու և քաղաքացու իրավական վիճակի սկզբունքները (իրավունքների, ազատությունների և պարտականությունների համընդհանուր լինելը, հավասարությունը, անօտարելիությունը):
3. Իրավունքների, ազատությունների և պարտականությունների հասկացությունը և բովանդակությունը: Մարդու հիմնական (սոցիալ-տնտեսական, քաղաքական, անձնական) իրավունքների միջազգային իրավական և սահմանադրական ամրագրման օբյեկտիվ բնույթը՝ (որպես անձի և պետության գոյության պայմանի):

Հիմնական իրավունքների և ազատությունների բնորոշ գծերը, որոնցով դրանք տարբերվում են իրավունքի այլ ճյուղերինորմերով կարգավորվող իրավունքներից:

4. Իրավունքների, ազատությունների ու պարտականությունների միասնությունը:
5. Իրավունքների և ազատությունների սահմանափակման հասկացությունը և հիմքերը: Սահմանափակման ենթակա և սահմանափակման ոչ ենթակա իրավունքները:
6. Իրավունքների և ազատությունների դասակարգումը: Դասակարգման հիմքերը և չափանիշները (մարդու իրավունքներ և քաղաքացու իրավունքներ, անհատական և կոլեկտիվ): Մարդու իրավունքների դասակարգումը ըստ բովանդակության (անձնական, քաղաքական, սոցիալ-տնտեսական):

հարցեր 1-6 դասախոսություն (Դասախոսությունն իրականացվում է դիդակտիկ նյութերը մատուցելու, դրանք վերլուծելու և ուսանողների հետ քննարկելու միջոցով):

հարցեր 1-6 ինքնուրույն աշխատանք, ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը (Այվազյան Վ.Ն., Մարդու իրավունքներ, Ուսումնական ձեռնարկ, «Տիգրան մեծ», Երևան, 2007 թ., Права человека, учебник для вузов, ред. Е. А. Лукашева М., 2006., Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, խմբ. Ն. Ա. Այվազյան, Երևան, 2012 թ.):

ԹԵՄԱ 4 ՔԱՂԱՔԱԳԻՈՒԹՅՈՒՆ

(2 ժամ դասախոսություն)

1. Քաղաքացիության հասկացությունը: Պետության և քաղաքացու միջև կապերի բնույթը (իրավական և կայուն): Հպատակությունը: Անձին չհանձնելը:
2. Քաղաքացիության ձեռքբերումը (ծնունդով՝ արյան և հողի սկզբունքների կիրառման առանձնահատկությունները, նատուրալիզացիա, օպտացիա, նվիրաբերում, ռեպատրիացիա):
3. Քաղաքացիության դադարեցումը: քաղաքացիության դադարեցման (դուրս գալը, այլ պետության քաղաքացիություն ընդունելը) հիմքերը և կարգը: Քաղաքացիու-

յունից դուրս գալուն խոչընդոտող հիմքերը: Քաղաքացիությունից զրկելը որպես բացառիկ միջոց:

4. Երկքաղաքացիություն, բազմաքաղաքացիություն և ապաքաղաքացիություն: Երկքաղաքացիության (բազմաքաղաքացիության) միջազգային իրավական և ներպետական խնդիրները:
5. Օտարերկրացիների իրավական վիճակը: Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավական վիճակը Հայաստանի Հանրապետությունում: Կացության ժամանակավոր, սովորական, հատուկ և բացառիկ կարգավիճակների սուբյեկտները և առանձնահատկությունները:
6. Քաղաքական ապաստանի իրավունքը:

հարցեր 1-6, դասախոսություն (դասախոսությունը ներկայացվում է քաղաքացիության ինստիտուտի միջազգային իրավական և տարբեր պետությունների փորձի համեմատական վերլուծության և ուսանողների հետ քննարկելու միջոցով):

հարցեր 4-6, ինքնուրույն աշխատանք, ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը (Այվազյան Վ.Ն., Մարդու իրավունքներ, Ուսումնական ձեռնարկ, «Տիգրան մեծ», Երևան, 2007 թ., Права человека, учебник для вузов, ред. Е. А. Лукашева, М., 2006., Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, խմբ. Ն. Ա. Այվազյան, Երևան, 2012 թ.): Միջազգային իրավական ակտեր և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտեր: <http://concourt.am/hr/indexa.htm>

ԹԵՄԱ 5 ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(ինքնուրույն աշխատանք)

1. Արժանապատվությունը որպես մարդու իրավունքների հիմք: Անազատության մեջ գտնվող անձի արժանապատվության պաշտպանության միջոցները:
2. Կյանքի իրավունքը: Մարդու կյանքի իրավունքի պաշտպանության հիմնական ուղղությունները (բնակչության բժշկական սպասարկումը, վերարտադրողական իրավունքը, հանցավորության դեմ պայքարի ուժեղացումը):
3. Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը և դրա երաշխիքները: Ազատությունից զրկելու սահմանադրական հիմքերը:
4. Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը (ոչ պաշտոնական շփումների շրջանակը, հարկադրված կապերը, մարդու ներաշխարհը, ընտանեկան կապերը, կրոնական համոզմունքները և այլն):

5. Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը: Բնակարանի և բնակիչների հասկացությունը; Բնակարան մուտք գործելու իրավունքի սուբյեկտները:
6. Ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքը:
7. Խղճի և հավատքի ազատության իրավունքը: Կրոնական կազմակերպությունների ձևավորման կարգը և իրավական վիճակը:
8. Մտքի և խոսքի ազատության իրավունքը: Դրանց իրականացման ձևերն ու եղանակները, սահմանափակման հիմքերը:

հարցեր 1-8 ինքնուրույն աշխատանք, ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը: (Այվազյան Վ.Ն., Մարդու իրավունքներ, Ուսումնական ձեռնարկ, «Տիգրան մեծ», Երևան, 2007 թ., Права человека, учебник для вузов, ред. Е. А. Лукашева М., 2006., Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, խմբ. Ն. Ա. Այվազյան, Երևան, 2012 թ.): Միջազգային իրավական ակտեր և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտեր:

<http://concourt.am/hr/indexa.htm>

Թեմա 6

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(ինքնուրույն աշխատանք)

1. Քաղաքացիների միավորվելու իրավունքը: Քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների մեջ միավորվելու և դուրս գալու կամավորության սկզբունքը:
2. Խաղաղ, առանց զենքի հավաքներանցկացնելու իրավունքի հասկացությունը, բովանդակությունը և իրականացման կարգը:
3. Տեղեկատվության ազատության իրավունքը: Մամուլի և լրատվության ազատությունը: Այն չարաշահելու դեպքում կիրառվող պատասխանատվության միջոցները:
4. Պետության կառավարմանը մասնակցելու իրավունքի բովանդակությունը և դրսևորման ձևերը (ընտրելու և ընտրվելու իրավունք, պետական (քաղաքացիական) ծառայության հավասար հնարավորության, արդարադատության իրականացմանը մասնակցելու, պետական մարմիններին դիմելու իրավունք):

հարցեր 1-4 ինքնուրույն աշխատանք, ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը: (Այվազյան Վ.Ն., Մարդու իրավունքներ, Ուսումնական

ձեռնարկ, «Տիգրան մեծ», Երևան, 2007 թ., Права человека, учебник для вузов, ред. Е. А. Лукашева, М., 2006., Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, խմբ. Ն. Ա. Այվազյան, Երևան, 2012 թ.): Միջազգային իրավական ակտեր և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտեր:

<http://concourt.am/hr/indexa.htm>

Թեմա 7

ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(ինքնուրույն աշխատանք)

1. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների բովանդակությունը:
2. Մասնավոր սեփականության և ժառանգման իրավունքի բովանդակությունը: Սեփականության ձևերնու պաշտպանությունը: Հողի նկատմամբ սեփականության իրավունքների առանձնահատկությունները:
3. Աշխատանքի ընտրության ազատության բովանդակությունը: Պետության պարտականությունները այդ իրավունքի իրականացման գործում: Հանգստի իրավունքը, հավասար աշխատանքի համար հավասար վարձատրության իրավունքը, պետության կողմից սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունք, անվտանգության և հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք:
4. Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը:
5. Բարենպաստ շրջակա միջավայր ունենալու իրավունքը:
6. Բավարար կենսամակարդակի, կենսապայմանների բարելավման և բնակարանի իրավունքը:
7. Ընտանիքի և անուսնության իրավունքը: Մայրության և մանկության պաշտպանությունը: Այդ խնդրի լուծման վիճակը գյուղաբնակ ընտանիքների հարցում:
8. Սոցիալական ապահովության իրավունքը: Ապահովագրական (տարիքային, արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, մասնակի) և սոցիալական (ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում) կենսաթոշակների բովանդակությունը:

9. Առողջության պահպանման և բժշկական օգնության իրավունքը: Պետության կողմից բնակչության առողջության պահպանման կապակցությամբ իրականացվող սանիտարահամաճարակային միջոցառումների տեսակները: Բժշկական օգնության և սպասարկման հիվանդանոցային և արտահիվանդանոցային եղանակները: Այդ ոլորտում անձին վերապահված իրավունքները:
10. Կրթության իրավունքը: միջնակարգ և բարձարգույն կրթության իրավունքի իրականացման առանձնահատկությունները:
11. Ստեղծագործության ազատության իրավունքը: Հեղինակային իրավունքի բովանդակությունը;
12. Մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը:

հարցեր 1-12 ինքնուրույն աշխատանք, ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը: (Այվազյան Վ.Ն., Մարդու իրավունքներ, Ուսումնական ձեռնարկ, «Տիգրան մեծ», Երևան, 2007 թ., Права человека, учебник для вузов, ред. Е. А. Лукашева М., 2006., Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, խմբ. Ն. Ա. Այվազյան, Երևան, 2012 թ.):Միջազգային իրավական ակտեր և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտեր:

<http://concourt.am/hr/indexa.htm>

**ԹԵՄԱ 8 ԱՌԱՆՁԻՆ ԽՈՒՄԲ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(4 ժամ դասախոսություն)**

1. Երեխայի իրավունքների հիմնահարցը ժամանակակից աշխարհում: Երեխայի իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերը: Երեխայի իրավունքների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը: Երեխաների, որպես առանձին կատեգորիայի անձանց, իրավունքների իրականացման առանձնահատկությունները (ազգային, պատմական, աշխարհագրական, կրոնական, սոցիալ-տնտեսական)
2. Կանանց իրավական վիճակը: Կանանց իրավահավասարության հիմնախնդիրը աշխարհում: Կանանց իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերը: Կանանց իրավունքների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը: Կանանց, որպես առանձին կատեգորիայի անձանց, իրավունքների ու ազատությունների իրականացման առանձնահատկությունները:

3. Փախստականների իրավական վիճակը: Փախստականների հիմնահարցը աշխարհում: Փախստականների միջազգային-իրավական պաշտպանությունը: Փախստականների իրավունքների ներպետական պաշտպանությունը: ՀՀ-ում փախստականների իրավական վիճակի առանձնահատկությունները՝ պայմանավորված նրանց ազգությամբ հայ լինելու հանգամանքով:
4. Ազգային փոքրամասնությունների միջազգային և ներպետական իրավական պաշտպանությունը:

հարցեր 1-4 դասախոսություն(դասախոսությունն իրականացվում է տեսական նյութը մատուցելու, դրա վերաբերյալ եվրոպական դատարանի և միջազգային այլ կառույցների ընդունած ակտերը վերլուծելու և կուրսի հետ քննարկելու միջոցով)

հարցեր 1-4 ինքնուրույն աշխատանք, ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը: (Այվազյան Վ. Ն., Մարդու իրավունքներ, Ուսումնական ձեռնարկ, «Տիգրան մեծ», Երևան, 2007 թ.): Միջազգային իրավական ակտեր և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտեր:

<http://concourt.am/hr/indexa.htm>

ԹԵՄԱ 9 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների հասկացությունն ու բովանդակությունը: Իրավական (ներպետական և միջազգային) և ոչ իրավական (քաղաքական, սոցիալ-տնտեսական և բարոյա-հոգեբանական) երաշխիքները:
2. Մարդու իրավունքների պաշտպանության ներպետական միջոցների բովանդակությունը:
3. Մարդու իրավունքների պաշտպանությունը Հանրապետության Նախագահի գործունեության բնագավառում:
4. Մարդու իրավունքների պաշտպանությունը Հանրապետության օրենսդիր իշխանության բնագավառում:
5. Օմբուդսմենի (մարդու իրավունքների պաշտպան) ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում: Նրա նշանակման կարգը, լիազորությունները և գործունեության կարգը:

6. Մարդու իրավունքների պաշտպանությունը Հանրապետության գործադիր իշխանության բնագավառում:
7. Մարդու իրավունքների դատական պաշտպանությունը: Իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը: Այն երաշխավորող հանգամանքները (դատարանների իրական անկախությունը, անկողմնակալությունը, գործի քննության հրապարակայնությունը, արդարությունը):
8. Իրավունքների և ազատությունների ինքնապաշտպանության իրավունքը:
9. Իրավաբանական օգնության և պաշտպան ունենալու իրավունքը:
10. Անմեղության կանխավարկածը:
11. Օրենքի հետադարձ ուժի արգելումը:

հարցեր 1-11 դասախոսություն (դասախոսությունն իրականացվում է դիդակտիկ նյութերը մատուցելու, դրանք վերլուծելու և կուրսի հետ քննարկելու միջոցով)

հարցեր 1-11 սեմինար, Սեմինար պարապմունքի ժամանակ կազմակերպվում են թեմայի խմբային քննարկումներ, այնուհետև փորձում են համապատասխան դիմումներ գրել ՄԻՊ գրասենյակ և այլ պետական մարմիններին՝ մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ, կազմել Մարդու իրավունքների պաշտպանի որոշման նախագծեր:

հարցեր 3-7 ինքնուրույն աշխատանք, ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը, վիճահարույց հարցերը քննարկվում են սեմինարին: (Այվազյան Վ.Ն., Մարդու իրավունքներ, Ուսումնական ձեռնարկ, «Տիգրան մեծ», Երևան, 2007 թ., Права человека, учебник для вузов, ред. Е. А. Лукашева М., 2006., Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, խմբ. Ն. Ա. Այվազյան, Երևան, 2012 թ.):

ԹԵՄԱ 10 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

(1 ժամ դասախոսություն)

1. Մարդու իրավունքների միջազգային պաշտպանության հասկացությունը:
2. Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային-իրավական փաստաթղթերը և դրանց դասակարգումը:
3. Մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ գլխավոր փաստաթղթերը.
 - ա) Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը

բ) Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը

գ) Սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը

դ) Հազարամյակի հռչակագիրը:

4. Առանձին կատեգորիայի անձանց պաշտպանության վերաբերյալ միջազգային կոնվենցիաները:

5. Մարդու իրավունքների պաշտպանության հատուկ կոնվենցիաները:

6. Խտրականության դեմ ուղղված կոնվենցիաները:

հարցեր 1-6 դասախոսություն (դասախոսությունն իրականացվում է մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերի դասակարգման դիդակտիկ նյութերը մատուցելու, դրանք վերլուծելու և կուրսի հետ քննարկելու միջոցով)

հարցեր 1-6 ինքնուրույն աշխատանք, ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը: (Այվազյան Վ.Ն., Մարդու իրավունքներ, Ուսումնական ձեռնարկ, «Տիգրան մեծ», Երևան, 2007 թ., Права человека, учебник для вузов, ред. Е. А. Лукашева, М., 2006., Международные акты о правах человека, Сборник документов, Сост. Карташкин В. А., Лукашева Е. А., М., НОРМА-ИНФРА, 1997): Միջազգային համապարփակ և տարածաշրջանային իրավական ակտեր <http://concourt.am/hr/indexa.htm>

ԹԵՄԱ 12 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՀԱՄԱԿԱՐԳ

(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Միավորված ազգերի կազմակերպություն:

2. ՄԱԿ-ի մարմինները.

ա) ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովը և երրորդ կոմիտեն

բ) ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհուրդը

գ) ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը

դ) ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարը

ե) Մարդու իրավունքների հանձնաժողովը և խտրականության կանխման և փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողովը:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը:

զ) Հատուկ զեկուցողներն ու աշխատանքային խմբերը:

է) ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը:

ը) Միջազգային քրեական դատարանը:

հարցեր 1-2 դասախոսություն (դասախոսությունն իրականացվում է պրոյեկտորի օգնությամբ դիդակտիկ նյութերը մատուցելու, դրանք վերլուծելու և կուրսի հետ քննարկելու միջոցով):

հարցեր 1-2 սեմինար, Սեմինար պարապմունքի ժամանակ կազմակերպվում են թեմայի խմբային քննարկումներ, ուսանողների կողմից ներկայացվում են զեկույցներ աշխարհի տարբեր երկրներում մարդու իրավունքների զանգվածային ոտնահարումների վերաբերյալ, որից հետո տեղի է ունենում քննարկում:

հարցեր 1-2 ինքնուրույն աշխատանք, ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը, վիճահարույց հարցերը քննարկվում են սեմինարին: (Այվազյան Վ.Ն., Մարդու իրավունքներ, Ուսումնական ձեռնարկ, «Տիգրան մեծ», Երևան, 2007 թ., Права человека, учебник для вузов, ред. Е. А. Лукашева, М., 2006., Международные акты о правах человека, Сборник документов, Сост. Карташкин В. А., Лукашева Е. А., М., НОРМА-ИНФРА, 1997): Միջազգային իրավական ակտեր: <http://concourt.am/hr/indexa.htm>

ԹԵՄԱ 13 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ԿՈՆՎԵՆՑԻՈՆ ՄԵՆԱՆԻԶՄՆԵՐԸ

(2 ժամ դասախոսություն)

1. Մարդու իրավունքների կոմիտեն:
2. Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն:
3. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն
4. Խոշտանգումների դեմ կոմիտեն
5. Երեխայի իրավունքների կոմիտեն
6. Ռասայական խտրականության դեմ կոմիտեն:

հարցեր 1-6 դասախոսություն(դասախոսությունն իրականացվում է պրոյեկտորի օգնությամբ դիդակտիկ նյութերը մատուցելու, դրանք վերլուծելու և կուրսի հետ քննարկելու միջոցով):

հարցեր 1-6 ինքնուրույն աշխատանք, ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը: (Այվազյան Վ.Ն., Մարդու իրավունքներ, Ուսումնական ձեռնարկ, «Տիգրան մեծ», Երևան, 2007 թ., Права человека, учебник для вузов, ред. Е. А. Лукашева, М., 2006., Международные акты о правах человека, Сборник документов, Сост. Карташкин В. А., Лукашева Е. А., М., НОРМА-ИНФРА, 1997): Միջազգային իրավական ակտեր: <http://concourt.am/hr/indexa.htm>

ԹԵՄԱ 14 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆԵՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՍՎԱՐԳԵՐԸ

(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական համակարգը:
2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը:
3. Մարդու իրավունքների պաշտպանության աֆրիկյան համակարգը:
4. Մարդու իրավունքների պաշտպանության միջամերիկյան համակարգը:
5. Մարդու իրավունքների պաշտպանության ասիական համակարգը:
6. Մարդու իրավունքների պաշտպանության ԱՊՀ համակարգը:

հարցեր 1-6 դասախոսություն(դասախոսությունն իրականացվում է պրոյեկտորի օգնությամբ դիդակտիկ նյութերը մատուցելու, դրանք վերլուծելու և կուրսի հետ քննարկելու միջոցով):

հարցեր 1-6 սեմինար. Սեմինար պարապմունքի ժամանակ կազմակերպվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատախաղ:

հարցեր 1-6 ինքնուրույն աշխատանք, ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը, պատրաստվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատախաղին: (Այվազյան Վ.Ն., Մարդու իրավունքներ, Ուսումնական ձեռնարկ, «Տիգրան մեծ», Երևան, 2007 թ., Права человека, учебник для вузов, ред. Е. А. Лукашева, М., 2006., Международные акты о правах человека, Сборник документов, Сост. Карташкин В. А., Лукашева Е. А., М., НОРМА-ИНФРА, 1997, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, վճիռների ընտրանի (1979-2000 թթ.), Վ. Հովհաննիսյան, Լ. Հակոբյան, Երևան, Տիգրան Մեծ, 2002): Միջազգային տարածաշրջանային իրավական ակտեր: <http://concourt.am/hr/indexa.htm>

ԹԵՄԱ 15 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Միջազգային մարդասիրական իրավունքի հասկացությունը, աղբյուրները և գործողության ոլորտը:
2. Մարդու իրավունքների պաշտպանությունը միջազգային մարդասիրական իրավունքի համակարգում:
3. Միջազգային մարդասիրական իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության կառույցները:
4. Միջազգային մարդասիրական իրավունքի խախտման համար պատասխանատվությունը:

հարցեր 1-4 դասախոսություն (դասախոսությունն իրականացվում է պրոյեկտորի օգնությամբ դիդակտիկ նյութերը մատուցելու, դրանք վերլուծելու և կուրսի հետ քննարկելու միջոցով):

հարցեր 1-4 սեմինար. Սեմինար պարապմունքի ժամանակ կազմակերպվում են թեմայի խմբային քննարկումներ

հարցեր 1-4 ինքնուրույն աշխատանք, ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը:(Այվազյան Վ.Ն., Մարդու իրավունքներ, Ուսումնական ձեռնարկ, «Տիգրան մեծ», Երևան, 2007 թ., Свинарску К. Основные понятия и институты международного гуманитарного права, как система защиты человека. М: МККК, 1997. Միջազգային իրավական ակտեր:<http://concourt.am/hr/indexa.htm>

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. Մարդու իրավունքները և դատավարությունը (միջազգային փաստաթղթերի ժողովածու), մասնագետ խմբագիր Վ. Այվազյան, Արեգ, Երևան, 1996:
2. Մարդու իրավունքները և ընտրությունները, Արեգ, Երևան, 1996:
3. Մարդու իրավունքները և ժողովրդավարությունը, միջազգային իրավական փաստաթղթեր, Երևան, 1994:

4. Մարդու իրավունքները և ժողովրդավարությունը (վարչաիրավական ոլորտ), միջազգային իրավական փաստաթղթեր, Երևան, 1995:
5. Մարդու իրավունքների եվրոպական դատարան (վճիռների ընտրանի, 1979-2000 թթ.), Երևան, 2002:
6. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, վճիռների ընտրանի (1979-2000 թթ.), Վ. Հովհաննիսյան, Լ. Հակոբյան, Լ. Հկոբյան, Երևան, Տիգրան Մեծ, 2002:
7. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան, ուսումնական նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր Վ. Քոչարյան, Երևան, 2007.
8. Международные акты о правах человека, Сборник документов, Сост. Карташкин В. А., Лукашева Е. А., М., НОРМА-ИНФРА, 1997.
9. Европейский суд по правам человека, Избранные решения, В двух томах, том 1, 2, Изд. НОРМА, Институт Европейского права МГИМО(У) МИД РФ, COLPI, Совет Европы, NIERIGHTS, М., 2000.

ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:

www.arlis.am

ՏԵՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Այվազյան Վ. Ն. Մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպումը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, Արեգ, 2000 թ.:
2. Այվազյան Վ. Ն., Մարդու իրավունքներ, Ուսումնական ձեռնարկ, «Տիգրան մեծ», Երևան, 2007 թ.:
3. Այվազյան Վ. Ն., Մարդու իրավունքներ, Ուսումնական ձեռնարկ, «Տիգրան մեծ», Երևան, 2002 թ.:
4. Երիցյան Ա. Հ., Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները Հայաստանի Հանրապետությունում, «Առերեսում», Երևան, 1995 թ.:
5. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, դասագիրք բուհերի համար, պատասխանատու խմբագիր` պրոֆ. Ն.Ա. Այվազյան, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2003 թ.:

6. Հովհաննիսյան Վ., Մարդու իրավունքների եվրոպական դատարան (գործունեության առանձնահատկությունները, վճիռների իրավաբանական բնույթը և գանգատների ներկայացման կարգը), Երևան, 2002 թ.:
7. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ, Դասագիրք, երկրորդ լրամշակված հրատարակություն, Այսբորն Էյդելի, Կատարինա Կրաուզեի և Ալան Ռոզասի խմբագրությամբ, Երևան, Տիգրան Մեծ-2009:
8. Մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմեն) ազգային հաստատություններ, Սահմանադրական և օրենսդրական ակտերի ժողովածու, Լ. հակոբյան, Գ. Հովհաննիսյան, Երևան, 2005:
9. Бекназар-Юзбашев Т. Б., Права человека и международное право., М., 1996.
10. Безлепкин Б. Т., Судебно-правовая защита прав и свобод граждан в отношениях с государственными органами и должностными лицами, М., 1997.
11. Бовринг Б., Международная защита прав человека, сборник дел по правам человека, Будапешт, 1996.
12. Бойцова В. В., Служба защиты прав человека и гражданина, Мировой опыт, М., 1996.
13. Гомьен Д., Харрис Д., Зваак Л., Европейская конвенция о правах человека и Европейская социальная хартия: право и практика, М., 1998.
14. Дженис М., Кэй Р., Бредли Э., Европейское право в области прав человека, Практика и комментарий, М., 1997.
15. Жуйков В. М., Права человека и власть закона. М., 1995.
16. Карташкин В. А., Права человека в международном и внутригосударственном праве, М., 1995.
17. Права человека, учебник для вузов, ред. Е. А. Лукашева М., 1999.
18. Гражданин, закон и публичная власть, ред. коллегия Ноздрачев А.Ф., Постников А. Е., Тихоморов, Ю.А., Норма, М. 2005.
19. К.К. Гасанов, Конституционный механизм защиты основных прав человека, ЮНИТИ, М., 2004.
20. Права человека и процессы глобализации современного мира, отв. ред. Е.А. Лукашева, изд. НОРМА. М., 2005.
21. Д. З. Мутагиров, Права и свободы человека, теория и практика, учебное пособие, Москва, Логос-2006.

22. Права человека в России и правозащитная деятельность государства, Сборник материалов Всероссийской научно-практической конференции, под ред. В. Н. Лопатина, изд. Юридический центр пресс-2003.
23. К. Экштайн, Основные права и свободы, учебное пособие для вузов, М., NOTABENE, 2004.

Առաջին ստուգման հարցաշար

1. Մարդու իրավունքների հասկացությունը
2. Մարդու իրավունքների հիմնարար բնույթի էությունը:
3. Մարդու իրավունքների ծագման պատճառներն ու պատմական արմատները:
4. Մարդու իրավունքների սերունդները
5. Մարդու իրավունքների առաջին սերունդը:
6. Մարդու իրավունքների երկրորդ սերունդը:
7. Մարդու իրավունքների երրորդ սերունդը:
8. Մարդու բնական իրավունքների մասին գաղափարների առաջացումն ու զարգացումը:
9. Մարդու իրավունքների վերբերյալ հայացքները հին Հունաստանում և Հռոմում:
10. Մարդու իրավունքների վերաբերյալ միջնադարյան և նորմոտեցումները:
11. Անձի իրավական կարգավիճակի հասկացությունն ու տարրերը:
12. Անձի իրավական վիճակի սկզբունքները:
13. Իրավունքների, ազատությունների ու պարտականությունների միասնությունը
14. Իրավունքների և ազատությունների սահմանափակումը
15. Իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակման հիմքերն ու իրավական ռեժիմը:
16. Մարդու իրավունքների դասակարգումը
17. Անհատական և կոլեկտիվ իրավունքների հարաբերակցությունը:
18. Քաղաքացիության հասկացությունը:
19. Քաղաքացիության ձեռքբերումը
20. Քաղաքացիության ձեռքբերման արյան և հողի սկզբունքների
21. Քաղաքացիության դադարեցումը
22. Երկքաղաքացիություն և բազմաքաղաքացիություն:
23. Օտարերկրացիների և ապաքաղաքացիների իրավական վիճակը:
24. Քաղաքական ապաստանի իրավունքը
25. Արժանապատվությունը որպես մարդու իրավունքների հիմք:
26. Կյանքի իրավունք:
27. Կյանքի իրավունքի սահմանափակման միջազգային իրավական հիմքերը:
28. Կյանքի իրավունքի և էվթանազիայի հարաբերակցությունը:

29. Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք
30. Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունք:
31. Բնակարանի անձեռնմխելիության իրավունք:
32. Ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք
33. Խղճի և հավատքի ազատության իրավունք
34. Մտքի և խոսքի ազատության իրավունք
35. Միավորվելու իրավունք
36. Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք
37. Տեղեկատվության ազատության իրավունք
38. Պետության կառավարմանը մասնակցելու իրավունք:
39. Ընտրելու և ընտրվելու իրավունք:
40. Պետիցիայի և արդարադատությանը մասնակցելու իրավունք:
41. Պետական ծառայության համար հավասար հնարավորության իրավունք:
42. Մասնավոր սեփականության իրավունք
43. Աշխատանքի ընտրության ազատություն
44. Գործադուլի իրավունք:
45. Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք
46. Բարենպաստ շրջակա միջավայր ունենալու իրավունք
47. Բարենպաստ շրջակա միջավայր ունենալու իրավունքի միջազգային-իրավական հիմքերը
48. Բավարար կենսամակարդակի, կենսապայմանների բարելավման և բնակարանի իրավունք
49. Ընտանիքի և անուսնության իրավունք:
50. Մայրության և մանկության պաշտպանությունը
51. Սոցիալական ապահովության իրավունք
52. Ապահովագրական և սոցիալական կենսաթոշակները:
53. Առողջության պահպանման իրավունք
54. Բժշկական օգնության իրավունք
55. Կրթության իրավունք
56. Բարձրագույն կրթության իրավունքի իրականացման առանձնահատկությունները
57. Ստեղծագործության ազատության իրավունք
58. Մշակութային կյանքին մասնակցելու իրավունք

Երկրորդ ստուգման հարցաշար

1. Երեխաների իրավական վիճակը
2. Կանանց իրավական վիճակը:
3. Երեխաների իրավունքների միջազգային-իրավական հիմքերը:
4. Երեխայի իրավական վիճակը ՀՀ-ում:
5. Փախստականների իրավական վիճակը:
6. Փախստականների իրավական վիճակի միջազգային-իրավական հիմքերը:
7. Փախստականների իրավական վիճակը ՀՀ-ում:

8. Ազգային փոքրամասնությունների իրավական վիճակը:
9. Ազգային փոքրամասնությունների իրավական վիճակի միջազգային-իրավական հիմքերը:
10. Ազգային փոքրամասնությունների իրավական վիճակը ՀՀ-ում:
11. Մարդու իրավունքների պաշտպանության ներպետական միջոցների բովանդակությունը:
12. Մարդու իրավունքների պաշտպանությունը Հանրապետության օրենսդիր իշխանության բնագավառում:
13. Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի համաշխարհային փորձը:
14. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի ձևավորման կարգն ու գործունեության երաշխիքները:
15. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործառույթներն ու լիազորությունները:
16. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը:
17. Մարդու իրավունքների պաշտպանությունը Հանրապետության գործադիր իշխանության բնագավառում:
18. Մարդու իրավունքների դատական պաշտպանությունը:
19. Իրավունքների և ազատությունների ինքնապաշտպանությունը:
20. Իրավաբանական օգնության և պաշտպան ունենալու իրավունք:
21. Անմեղության կանխավարկածը:
22. Օրենքի հետադարձ ուժի արգելումը:
23. Մարդու իրավունքների միջազգային պաշտպանության հասկացությունն ու բովանդակությունը:
24. Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերը:
25. Մարդու իրավունքների պաշտպանությունը ՄԱԿ-ի համակարգում:
26. ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովը:
27. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը:
28. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը:
29. ՄԱԿ-ի արդարադատության միջազգային դատարանը:
30. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարը:
31. ՄԱԿ-ի հատուկ զեկուցողները և աշխատանքային խմբերը:
32. ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը:
33. Միջազգային քրեական դատարանը:
34. Մարդու իրավունքների պաշտպանության կոնվենցիոն մեխանիզմները:
35. Մարդու իրավունքների կոմիտեն:
36. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն:
37. Ռասայական խտրականությունների վերացման կոմիտեն:
38. Խոշտանգումների դեմ կոմիտեն:
39. Երեխայի իրավունքների կոմիտեն:
40. Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական համակարգը:
41. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կազմակերպման կարգն ու կառուցվածքը:
42. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավասությունն ու ակտերը:

43. Մարդու իրավունքների պաշտպանության ամերիկյան համակարգը:
44. Մարդու իրավունքների պաշտպանության աֆրիկյան համակարգը:
45. Մարդու իրավունքների պաշտպանության ասիական համակարգը:
46. Մարդու իրավունքների պաշտպանության ԱՊՀ համակարգը:
47. Միջազգային մարդասիրական իրավունքի հասկացությունը,
Միջազգային մարդասիրական իրավունքի աղբյուրները և գործողության ոլորտը:
48. Մարդու իրավունքների պաշտպանությունը միջազգային մարդասիրական իրավունքի համակարգում:
49. Նավաբեկյալների, հիվանդների և վիրավորների պաշտպանությունը:
50. Ռազմագերիների պաշտպանությունը:
51. Քաղաքացիական բնակչության պաշտպանությունը:
52. Ռազմական բռնազավթման ռեժիմը:
53. Միջազգային մարդասիրական իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության կառույցները:
54. Պատասխանատվությունը միջազգային մարդասիրական իրավունքի խախտման համար:
55. Կոլեկտիվ պատասխանատվություն:
56. Անհատական պատասխանատվություն: